**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«____» _____________ 2025թ. N ______- Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի գրությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Կազմված է 27.11.2025 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

*Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է*

Երևանի քաղաքապետի
_____.______________ 2025 թ.
թիվ __________ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

__________________ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

**Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
**15.06.2010թ.**
գրանցման համար՝ **286.140.02021**
հարկ վճարողի հաշվառման համար՝
**02507818**
15.06.2010 թ. գրանցված կանոնադրության
թիվ _______.____ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից
"_____"_____________ 2025 թ.

Աշխատակից՝

__________________ ________________

# «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
## փակ բաժնետիրական ընկերության
## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

ԵՐԵՎԱՆ 2025

«Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Կանոնադրության 1-ին կետի 1.8 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.8. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն ք. Երևան, Հնդկաստանի փող., 8 շին.»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 15.06.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

---------------------------------------------------------------------------------

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**««ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Համաձայն «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒՅԹՈՒՆ» ՓԲԸ-ի կանոնադրության 1.8 կետի՝ «Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ձորափի 40», իսկ դեռևս 2017 թվականին ք. Երևան, Ձորափի փողոցի՝ Պարոնյան փողոցից մինչև Ուրուգվայի հրապարակ ընկած հատվածը վերանվանվել է Հնդկաստանի փողոց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն նախաձեռնել է փաստաթղթերում հասցեի ճշտգրտումներ կատարելու գործընթաց, որի արդյունքում ընկերության հասցեն դարձել է՝ ք. Երևան, Հնդկաստանի փող., 8 շին.: Վերջինս գրանցվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կանոնադրությունում ևս կատարել փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**